ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ. meo@ypc.am

ԶԼՄ-ների Էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը*

Ընդդեմ Գագիկ Շամշյանի՝ «Առավոտ» օրաթերթի կայքում տեղադրված հոդվածի եւ տեսաշարի՝ Աննա Սիմոնյանի բողոքի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ Աբրահամյան
Գեղամ Բաղդասարյան
Լևոն Բարսեղյան
Մեսրոպ Հարությունյան
Արա Ղազարյան
Գեղամ Մանուկյան
Աշոտ Մելիքյան
Էմանուիլ Մկրտչյան
Մեսրոպ Մովսեսյան
Գնել Նալբանդյան
Բորիս Նավասարդյան
Նունե Սարգսյան
Օլգա Սաֆարյան
Գեղամ Վարդանյան

Քննարկելով ընդդեմ Գագիկ Շամշյանի՝ «Առավոտ» օրաթերթի կայքում (www.aravot.am) 2012 թվականի փետրվարի 7-ին տեղադրված «38-ամյա երիտասարդը, ըստ նախնական տեղեկությունների, կրակել է իր վրա» հոդվածի եւ տեսաշարի՝ Աննա Սիմոնյանի 2012 թ. փետրվարի 8-ին բերված բողոքը, ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը նշում է.

1. Վեճի առարկա հանդիսացող հոդվածում ինքնասպանություն գործած անձի անվան եւ ազգանվան նշումն ընդունելի չէ եւ չի համապատասխանում Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի պահանջներին, մասնավորապես դրա 4.3. կետին, որում ասված է. «Զգույշ լինել ... ինքնասպանություն գործած անձանց ինքնությունը բացահայտելիս», ինչպես նաեւ 4.4 կետին, որը լրատվամիջոցներին կոչ է անում՝ «ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություն-ներ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ»:

2. 4.4 կետը խախտվել է նաեւ տեսաշարը կազմելիս՝ նկարների ընտրության ժամանակ: Տվյալ դեպքում լրագրողի կողմից արված եւ կայքում տեղադրված լուսանկարները չեն համապատասխանում լրագրողական էթիկայի կանոններին: Այս առումով, Դիտորդ մարմինն ընդգծում է նմանատատիպ դեպքեր եւ պատահարներ լուսաբանելիս լուսանկարների ընտրության հարցում ավելի նրբանկատ լինելու անհրաժեշտությունը: Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի 4.5. կետում լրատվամիջոցներին կոչ է արվում՝ «պահպանել անմեղության կանխավարկածը. մինչեւ դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաստանի իրավունքի եւ

հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ»:

3. Ինչ վերաբերում է հոդվածը հրապարակած զանգվածային լրատվության միջոցին, այն է՝«Առավոտ» օրաթերթի խմբագրությանը, ապա Դիտորդ մարմինը խորհուրդ է տալիս առավել զգույշ լինել նման ողբերգական դեպքերի մասին լուսաբանման, նյութերի եւ լուսանկարների ընտրության հարցում:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի 2012թ. փետրվարի 17-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ Բաղդասարյան, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Մեսրոպ Հարությունյան, մամուլի փորձագետ
Գեղամ Մանուկյան, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության տեղեկատվական և հասարակական-քաղաքական հաղորդումների տնօրեն
Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ,
Էմանուիլ Մկրտչյան, «Արմինֆո» լրատվական գործակալության տնօրեն,
Բորիս Նավասարդյան, Երևանի մամուլի ակումբի նախագահ,
Նունե Սարգսյան, Մամուլի աջակցության «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման մարմնի 2007 թվականի մարտի 10-ի ժողովին: